

«Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանի այցը հատուկ կարիքավոր երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններ

«Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը և մարզպետարանի աշխատակազմի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Ոսկանյանը այցելել են հատուկ կարիքավոր երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններ՝ կատարվող աշխատանքներին և խնդիրներին ծանոթանալու համար:

Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր, Խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի Կապանի մասնաճյուղ և Կապանի մանկական կենտրոն ՀՈԱԿ շրջայցերի ընթացքում դիտարկվել են այդ հաստատություններում դասապրոցեսի, սննդի, հանգստի կազմակերպման աշխատանքներն ու երեխաների համակողմանի զարգացմանն ուղղված իրագործվող ծրագրերից ակնկալվող հնարավոր արդյունքները:

